



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ
 Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԵՋ**

Շաբաթ, 4 Նոյեմբերը Ամենայն Սրբոց Տօնն է: Տարիներու աւանդութեամբ, Էնսիլոյի Սրբոց Նահատակաց եկեղեցին այս առիթով կը տօնախմբէ իր անուանակոչութեան օրը, Կիրակի, 5 Նոյեմբերին:

Թեմիս բարեջան Առաջնորդը Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Կիրակի առաւօտուն հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ, մատաղօրինէք պիտի կատարէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին պիտի սպասարկեն Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան:

Ս. Պատարագէն ետք, հաւատացեալները հրաւիրուած են մատաղի օրինութեան, պատրաստուած եկեղեցւոյ Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ, «Աւետիսեան» սրահին մէջ:

Շաբաթ, Նոյեմբեր 4-ի երեկոյեան ժամը 8-ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով աւանդական ճաշկերոյթ մը կազմակերպուած է Woodland Hills Marriott պանդոկի ճաշասրահին մէջ: Ձեռնարկը տեղի կ'ունենայ հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր եւ հիւրընկալութեամբ Տեր եւ Տիկին Խաչիկ Մուրատեանի:

**PRELATE TO CONDUCT HOLY MASS AT HOLY MARTYRS
 ON THE NAME DAY OF THE CHURCH**

According to our church calendar, Saturday, November 4, 2006 is All Saints Day. Traditionally, Holy Martyrs Church of Encino celebrates its name day during this time. On Sunday, November 5, on this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will conduct Holy Mass, deliver the sermon, and preside over the blessing of *madagh* at Holy Martyrs Church.

Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Razmig Khatchadourian, Pastor of Holy Martyrs Church, will assist at the altar. The blessing of the *madagh*, which will be prepared by the parish Ladies Auxiliary, will take place immediately following church services, at Avedissian Hall.

On Saturday, November 4, the annual banquet of the church will take place at the Marriott Hotel in Woodland Hills. The banquet is being held under the auspices of the Prelate and hosted by Mr. and Mrs. Khachik and Elo Mouradian.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՀԻՒՐԸՆԿԱԼԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍԿ. ԽԱՉԵՐԵԱՆԸ**

Անցեալ շաբաթ, գաղութս այցելեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Եպս. Խաչերեան:

Չորեքշաբթի, 1 Նոյեմբերի երեկոյեան, Թեմիս Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութիւնը մտերմիկ հանդիպում մը ունեցան հիւր Առաջնորդ Սրբազանին հետ: Խորհրդակցութեան նիւթ դարձան Լիբանանի վիճակը՝ ընդհանրապէս, ու հայ գաղութի դիմագրաւած հարցերը՝ մասնաւորաբար: Տ. Գեղամ Եպսկ. Խաչերեան ապա ընթրիքի հիւրը եղաւ Առաջնորդ Սրբազանին ու Ազգային Վարչութեան:

Լիբանանի Առաջնորդ Սրբազանը անցեալ Կիրակի, Հոկտեմբեր 29ին, Ս. Պատարագ մատուցեց Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, իսկ Հինգշաբթի, 2 Նոյեմբերին, քաղաքս իր մեկնումէն առաջ, Սրբազանը Թեմիս Առաջնորդ Սրբազանին, Հոգեւորականաց Դասու անդամներու եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Միութեան ներկայացուցիչներու հետ ճաշի սեղանի շուրջ մտերմիկ պահ մը բոլորեց:

**THE PRELATE AND EXECUTIVE COUNCIL
WELCOME THE PRELATE OF LEBANON
H. G. BISHOP KEGHAM KATCHERIAN**

This past week, H.G. Bishop Kegham Katcherian, Prelate of Lebanon, visited our Prelacy. On the evening of Wednesday, November 1st, Prelate Archbishop Mardirossian and the Executive Council met with Bishop Katcherian to discuss the situation in Lebanon and specifically the difficulties facing the Armenian community, after which they hosted the Bishop to dinner.

Prior to his arrival in Los Angeles, the Prelate was in Fresno where, on Sunday, October 29, he conducted Mass at Holy Trinity Church. On Thursday, November 2nd, before his departure, Bishop Katcherian was honored with a reception by the Prelate, clergy members, and representatives from the Prelacy Ladies Auxiliary.

**ՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝ «ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ԹԱՅՄՁ»Ի
ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉԻՆ ՈՒ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ**

Չորեքշաբթի, 1 Նոյեմբերի կէսօրին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ մեծարանքի ընդունելութեան մը, ի պատիւ «Լոս Անճելըս Թայմզ»

պատասխանատուներուն ու հրատարակիչին՝ Տէյվիտ Յիլլրի, որ Յոկտեմբերին նշանակուած է այս պաշտօնին:

Հանդիպումը նախաձեռնութիւնն էր հանրային գործիչ Լէրի Չարեանի, իսկ հիւրընկալութիւնը ստանձնած էր «Ֆէնիսա» ճաշարանի սեփականատէր Տիար Արա Գալֆայեան: Ներկայ էին «Լոս Անճելըս Թայմզ»ի խմբագրութեան անդամներ, հայկական կազմակերպութեանց ու միութեանց, ինչպէս նաեւ մամուլի ներկայացուցիչներ:

Ընդունելութիւնը առիթ եղաւ փոխադարձ ծանօթացման ու հասարակաց հետաքրքրութիւն ստեղծող հարցերու մասին տեսակետներու փոխանակման:

Ներկաները գնահատանք արտայայտեցին «Լոս Անճելըս Թայմզ»ի խմբագրութեան որդեգրած առողջ կեցուածքներուն համար, ինչ կը վերաբերի հայութիւնը շահագրգռող հարցերու: Ծանօթ է, որ այս օրաթերթը յատկապէս վերջին շրջանին հայկական հարցի տարբեր ոլորտներուն մասին կը ցուցաբերէ անաչառ ու արդար կեցուածքներ, ինչ որ տեղեկատուական ասպարէզին մէջ հայանպաստ մթնոլորտի ստեղծման կը նպաստէ:

PRELATE CONGRATULATES THE PUBLISHER, EDITORIAL STAFF, AND LEADERSHIP OF THE LOS ANGELES TIMES

On the afternoon of Wednesday, November 1st, the Prelate attended a special reception in honor of David Hiller, who was recently named president, publisher, and chief executive officer of the Los Angeles Times.

The luncheon, which was organized by community activist Larry Zarian, was hosted by restaurateur Ara Kalfayan at his Phoenicia Restaurant in Glendale. Members of the Los Angeles Times editorial staff were in attendance, along with representatives of Armenian organizations and the media.

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

Չորեքշաբթի, Նոյեմբեր 1-ի երեկոյեան ժամը 7:30-ին, հայութիւնը շահագրգռող դասախօսութիւն մը տեղի ունեցաւ Կլէնտէյլի հանրային գրադարանի սրահին մէջ: Երեկոն կազմակերպուած էր Հայ Կրթական Հիմնարկութեան կողմէ: Դասախօսն էր UCLA-ի արդի հայոց պատմութեան ամպիոնի վարիչ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան, որ ներկայացուց «Անհետացող Բնօրրան Պատմական Արեւմտեան Հայաստան» սիւթը, համապատասխան լուսանկարներով:

Յանուն Առաջնորդ Սրբազան հօր, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան ներկայ եղաւ դասախօսութեան:

LECTURE ORGANIZED BY THE ARMENIAN EDUCATIONAL FOUNDATION

On the evening of Wednesday, November 1st, a lecture took place at Glendale Public Library, organized by the Armenian Educational Foundation. Prof. Richard Hovannisian, AEF Chair in Modern Armenian History at UCLA, spoke on “The Vanishing Landscape of Historic Western Armenia”.

Rev. Vazken Atmajian, Pastor of St. Mary’s Church, represented the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՉԼԵԱԻՐ ՅԻՊԱՏՈՍԸ

2 Նոյեմբեր թուակիր հաղորդագրությամբ մը, Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանը յայտնեց, թէ Հայաստանի արտաքին գործոց նախարարին որոշումով, 30 Յոկտեմբերին, Լոս Անճելըսի մօտ Հայաստանի գլխաւոր հիւպատոս նշանակուած Է Արմէն Լիլոյեան: Ան կը յաջորդէ նախկին գլխաւոր հիւպատոս Գագիկ Կիրակոսեանի, որուն պաշտօնավարութեան շրջանը աւարտած էր քանի մը ամիս առաջ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը հաղորդակցութեան մէջ մտաւ հիւպատոսարանին հետ, շնորհաւորելու համար նոր նշանակեալ հայրենի դիւանագետը ու յանուն Թեմիս Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան յաջողութիւն մաղթելու անոր, միաժամանակ փոխանցելու Ազգային Առաջնորդարանիս զօրակցութիւնը անոր առաքելութեան:

Միւս կողմէ, Առաջնորդ Սրբազան հայրը շնորհաւորական յատուկ նամակով մը, յանուն Թեմիս ժողովականութեան եւ ժողովուրդին, շնորհաւորեց Լիբանանի գլխաւոր հիւպատոս Տիար Շարայէլ Ուահպին, որ վերջերս պաշտօնի բարձրացում ունենալով՝ դեսպանի կարգ ստացած է:

PRELATE CONGRATULATES THE NEW CONSUL GENERAL OF ARMENIA

In a press release dated November 2nd, the Consulate General of the Republic of Armenia announced that on October 30, Foreign Minister Vartan Oskanian appointed Armen Liloyan to serve as the Consul General of Armenia in Los Angeles.

On behalf of the Prelacy Religious and Executive Councils, the Prelate offered his congratulations, support, and best wishes to the Consul.

The Prelate also sent a congratulatory letter to Consul General of Lebanon Charbel Wehbe, on his recent elevation to the rank of ambassador.

ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԸ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

2 Նոյեմբեր թուակիր հաղորդագրությամբ մը, Հայկական Միացեալ Հիմնադրամը յայտարարեց, թէ շնորհիւ ԼԻՆՍԻ Հիմնարկին կողմէ կատարուած բացառիկ յատկացումի մը, Միացեալ Հայկական Հիմնադրամը 4.5 միլիոն տոլարի

բացառիկ յատկացում մը կը կատարէ Լիբանանի հայկական բոլոր վարժարաններուն, որոնց թիւն է 28:

Հաղորդագրութիւնը կը յայտնէ, թէ այս նուիրատուութիւնը կատարուած է նկատի ունենալով Լիբանանի դիմագրուած տնտեսական տագնապը, որ աւելի եւս ծանրացաւ անցեալ ամառէն ի վեր, ծանօթ աւերիչ յարձակումներուն հետեւանքով, նիւթական նեղ կացութեան մատնելով ծնողներ ու կրթական հաստատութիւնները:

Այս գումարին մեծագոյն բաժինը՝ 3.2 միլիոն տոլար, պիտի տրամադրուի, հոգալու համար աւելի քան 5 հազար աշակերտներու կրթաթոշակը. այս թիւը կը կազմէ Լիբանանի հայկական վարժարաններու աշակերտներուն գրեթէ 75 առ հարիւր համեմատութիւնը: 757,000 տոլարի բաժին մը տրամադրուած է հոգալու համար կրթական մշակներու եւ անձնակազմի թոշակները, իսկ 513,000 տոլարի բաժին մը կը տրամադրուի 28 վարժարաններուն, հոգալու համար անոնց զանազան կարիքները:

Միացեալ Հայկական Հիմնադրամի նախագահ Յարութ Սասունեան Լիբանան ուղղուած է, որպէսզի անձամբ կատարէ նուերներուն փոխանցումը: Հաղորդագրութիւնը կը յայտնէ, թէ նպաստ ստացող վարժարաններէն ինը Ազգային Վարժարաններ են, եօթը՝ Հայ Աւետ. Համայնքի վարժարաններ, վեցը՝ Հայ Կաթողիկէ Համայնքի վարժարաններ, երեքը՝ Հ.Բ.Ը.Մ.ի վարժարաններ, իսկ միւս երեք՝ Համազգայինի Հայկ եւ Մելանքթոն ճեմարանը, Թեքէեանի Մշակութային Միութեան Վահան Թեքէեան վարժարանը եւ Հայ Կրթական Բարեսիրական Միութեան Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Զուլէճը:

Ծանօթ է, որ Միացեալ Հայկական Հիմնադրամին անդամ են Միացեալ Նահանգներու հայկական երեք յարանուանութիւնները եւ գաղութի գլխաւոր կազմակերպութիւններն ու միութիւնները: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը անոր վարչութեան անդամներէն մէկն է:

Այս իշխանական նուիրատուութեան առիթով, Առաջնորդ Սրբազանը յանուն Թեմիս ժողովականութեան, բարձր գնահատանք արձանագրեց Լիսսի Հիմնարկութեան ու Հիմնադրամին, Լիբանանի հայութեան տրամադրուած այս աննախընթաց աջակցութեան համար:

LINCY FOUNDATION MAKES A GENEROUS DONATION TO ARMENIAN SCHOOLS IN LEBANON

In a November 2nd press release, the United Armenia Fund announced that thanks to a generous grant from the Lincy Foundation, the organization is donating \$4.5 million to all 28 Armenian schools in Lebanon. In the press release, it was noted that this donation was made to alleviate the economic crisis the country is facing, which was worsened by the atrocities of this past summer.

According to the press release, \$3.2 million will be allocated to help cover the tuition expenses of more than 5,000 students, or 75% of students enrolled in all the schools, \$757,000 will help cover the salaries of the teachers and staff, and \$513,000 will go to the general expenses of each school.

United Armenia Fund president Harut Sassounian is visiting Lebanon to personally transfer the funds. In the press release, it was announced that the donation will assist nine Prelacy schools, seven Evangelical schools, six Catholic schools, three AGBU schools, the Hamazkayin M & H Arslanian College, the Tekeyan Cultural

Association Vahan Tekeyan school, and the Armenian Educational Benevolent Union Sahagian-L. Meguerditchian College.

The three Armenian denominations in the U.S. are members of the UAF, as are community organizations and associations, and Archbishop Mardirossian is a member of the UAF Board.

In light of this significant donation, the Prelate highly commended the Lincy Foundation and the UAF for their unprecedented contribution.